

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ



Հայոց ցեղասպանություն - 100

ՃԱՆԱԶՈՒՄԻՑ՝ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Այս տարվա ապրիլին մեր ժողովուրդը, Հայոց Սփյուռքի հետ բարձր արժանապատվությամբ և մեծ շուքով նշեց Հայոց մեծ եղեռնի 100 տարին: Այդ օրը, ապրիլի 24-ին, ի լուր աշխարհի մենք հայտարարեցինք՝ «Մենք հիշում ենք և պահանջում»:

Այս նշանաբանը հիրավի նորույթ էր և նոր կարգախոս՝ մենք ոչ միայն հիշում ենք, այլև պահանջում: Մենք, որ ի հեծուկս թուրք մարդասպանի ճիվաղային նկրտումների, շարունակում ենք զոյախել, ապրել և ունենք մեր անկախ և ինքնիշխան պետությունը, մեզ հռչակում ենք պահանջատեր մեր կորուսյալ հայրենիքի, զազամաբար մորթված և ողջակիզված մեկ և կես միլիոն հայ նահատակների հիշատակի համար:

Ներկա գիտաժողովը, ըստ էության, այդ նոր նշանաբանի՝ ոչ միայն հիշում ենք, այլև պահանջում, տրամաբանական շարունակությունն էր: Դրա համար այն կրում էր «Ճանաչումից՝ հատուցում» խորագիրը:

Գիտաժողովը մեկնարկեց հոկտեմբերի 15-ին, ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում: Գիտաժողովը բացեց և նրա աշխատանքներին հաջողություն մաղթեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

Այնուհետև ընթերցվեց Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի ողջույնի ուղերձը: Գիտաժողովի մասնակիցներին ներկայացվեցին Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիել Բ-ի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի ողջույնի ուղերձները:

Ողջույնի խոսքերով հանդես եկան Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանը, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, ԱՄՆ-ի Հայագետների ընկերակցության նախագահ Գևորգ Բարդակչյանը և Վիկտոր Զախարովը (ՌԴ):

Լիազույնար նիստում զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը՝ «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը և հատուցման հիմնախնդիրը», Ռուսլան Շուլգան (Ռուսաստանի Դաշնություն)՝ «Проблемы устранения последствий Геноцида армян. От признания к требованиям компенсации», ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրասյանը՝ «Դիվանագիտությունն ընդդեմ

ցեղասպանության. Անտանտի երեք երկրների 1915 թ. մայիսյան հայտարարագիրը (ակունքները և հետևանքները)», Էդիկ Մինասյանը՝ «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման նոր փուլի առանձնահատկությունները. դատապարտում և հատուցում», «Michael Nesemann (Germany) The Vatican end the Armenian Genocide of 1915/1916»):

Այնուհետև գիտաժողովը շարունակվեց տարբեր բաժանմունքներում.

Պատմություն. պատմագրություն

Հայկական հարց. Աշխարհաքաղաքականություն

Հայոց ցեղասպանության արտացոլումը արվեստում

Տեսություն. Հիշողություն

Հայոց ցեղասպանության արտացոլումը գրականության մեջ

Ցեղասպանության հետևանքների վերացման և հատուցման իրավաքաղաքական ու սոցիալ-տնտեսական հիմնախնդիրը

Մշակութային ցեղասպանություն՝ «Սպիտակ եղեռն»:

Հայոց ցեղասպանության արտացոլումը գրականության մեջ:

Նշենք, որ գիտաժողովի աշխատանքներին մասնակցում էին շուրջ 100 մասնագետներ Հայաստանից, Գերմանիայից, Ռուսաստանի Դաշնությունից, ԱՄՆ-ից, Ավստրիայից, Ավստրալիայից, Ուկրաինայից, Կանադայից, Լեհաստանից, Հունգարիայից և այլ երկրներից: Բաժանմունքներում լսվեցին ավելի քան 100 զեկուցումներ և հաղորդումներ:

Գիտաժողովի մասնակիցները եղան Եղեռնի հուշահամալիրում, ցեղասպանության թանգարան-ինստիտուտում, ներկա եղան իրենց պատվին տրված համերգին:

Հոկտեմբերի 16-ին, նույնպես լիազույնար նիստում, ամփոփվեցին գիտաժողովի արդյունքները: Նշվեց, որ այս գիտաժողովը յուրովի ամփոփումն էր Եղեռնի 100-ամյակի տարվա միջոցառումների և իր բովանդակությամբ և ասելիքով միահամուռ փաստեց, որ Հայոց եղեռնի միջազգային ճանաչման գործընթացին զուգընթաց պետք է վճռական քայլեր (իրավական, դիվանագիտական) ձեռնարկել հատուցման հիմնավոր և իրական ուղիների որոնման և իրագործման համար:

ՀՀ ԳԱԱ-ում կայացավ «Կոմայուտերային գիտություն և տեղեկատվական տեխնոլոգիաներ» (CSIT- 2015) հեղինակավոր գիտաժողովը

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստերի դահլիճում մեկնարկեց հեղինակավոր «Կոմայուտերային գիտություն և տեղեկատվական տեխնոլոգիաներ» (CSIT- 2015) 10-րդ միջազգային գիտաժողովը: Այն անցկացվում է 2 տարին մեկ՝ սկսած 1997 թվականից: Գիտաժողովի կազմակերպիչներն են ՀՀ ԳԱԱ-ն, ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը:

CSIT-2015 հոբելյանական գիտաժողովի նպատակն էր նպաստել կոմայուտերային գիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների գիտական գաղափարների փոխանակմանը, ներկայացնել և քննարկել հետազոտությունների արդյունքները:

Լիազույնար նիստում զեկուցումներով հանդես եկան Թուրքիայի (Ֆրանսիա) հետազոտական ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Միշել Դայդեն, Կրեմլի (Հունաստան) տեխնիկական համալսարանի նախագահ Դիոնիս Ցիլիսիսը:

Գիտաժողովի 10 մասնաճյուղերում զեկուցումներով հանդես եկան 100-ից ավելի գիտնականներ և հետազոտողներ Հայաստանից, ԱՄՆ-ից, Նիդեռլանդներից, Ֆրանսիայից, Ճապոնիայից, Խորվաթիայից, Հունաստանից, Գերմանիայից, Ուկրաինայից, Ռուսաստանի Դաշնությունից, Կրաստանից, Սլովակիայից, Իրանից, Լեհաստանից:

Ներկայումս Հայաստանում կուտակվել է բավարար գիտական և ինժեներական ներուժ՝ ազգային սուպերկոմպյուտերային կենտրոն ստեղծելու համար: Կենտրոնի ստեղծման առաջարկը քննարկվեց CSIT-2015-ի շրջանակներում կայացած կլոր սեղանի շուրջ, որին մասնակցեցին օտարերկրյա գիտնականներ և Հայաստանի շահագրգիռ գերատեսչությունների և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ: CSIT-2015-ի շրջանակներում տեղի ունեցավ նաև երեք աշխատանքային գիտաժողով: Երիտասարդ մասնագետների համար դասընթացներն անցկացրին «Intel Corporation»-ը և համաեվրոպական GEANT ցանցը:

CSIT-2015-ն իրականացվեց ՀՀ ԳԱԱ-ի, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի, «IEEE Computer Society»-ի, «Intel Corporation»-ի հայաստանյան մասնաճյուղի, «Synopsis Armenia»-ի ֆինանսական և տեխնիկական աջակցությամբ:

ՀՀ ԳԱԱ Տեղեկատվական-վերլուծական կենտրոն

«Կլոր սեղան» ՀՀ ԳԱԱ-ում

Տարածաշրջանում Հայաստանն առաջինն է, որ նախագծում է հիմնել ազգային գերհամակարգչային կենտրոն, որը կնպաստի պետական, գիտական և սոցիալական խնդիրների լուծմանը: Նախօրեին «Հայաստանի ազգային գերհամակարգչային կենտրոնի հիմնադրում» կլոր սեղանի քննարկմանը լրագրողների հետ զրույցում ասաց ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների լաբորատորիայի վարիչ, Հայկական վիրտուալ աստղադիտարանի տեխնիկական ղեկավար Հրաչյա Ասատրյանը:

«Գերհամակարգչային կենտրոնը հնարավորություն կունենա լուծելու այնպիսի բարդ խնդիրներ, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը, եղանակի կանխատեսումը, շրջակա միջավայրի պահպանությունը և այլն: Նախատեսվում է կենտրոնը կառուցել ԳԱԱ-ին կից ու տեղակայել ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում», - նշեց նա:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանն էլ հավելեց, որ Հայաստանը համակարգչագիտության առաջատար երկրներից մեկն է և այստեղ ևս պետք է լինի լուրջ հնարավորություններով գերհամակարգչային համակարգ: «Համակարգը պետք է ունենա այնպիսի հնարավորություններ, որ կարողանա լուծել համակարգչային ոլորտի բազմաթիվ խնդիրներ՝ գիտական, մոդելավորման, հատկապես այսօր շատ արագ զարգացող կենսաբանական ինֆորմատիկայի, որոնք անմիջապես կապված են համակարգչային խոշոր ծրագրերի օգտագործման հետ: Մեր երկրի համակարգչագիտությունն արդեն հասել է այն մակարդակին, որ ընդհանուր զարգացումը պայմանավորված է նաև խոշոր համակարգչային կենտրոնների ստեղծումով», - ասաց նա:



ԼԱՋԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ 200 ՏԱՐԻՆ

2015 թվականին լրանում է Մոսկվայի Լազարյան ճեմարանի 200-ամյակը: Մեծահարուստ հայ վաճառականներ Լազարյանները 1815 թվականին իրենց միջոցներով Մոսկվայում հիմնեցին տարրական տիպի մասնավոր դպրոց և կոչեցին Հայկական Լազարյան ուսումնարան: Նպատակը՝ հայ երեխաներին հատկապես մայրենի լեզվով ուսում տալն ու նաև օտար լեզուների դասավանդումը: Ճեմարանում ուսանում էին հիմնականում հայ երեխաներ և ռուսներ:

Տարիներ անց այն դարձավ բարձրակարգ ուսումնական հաստատություն և 1827 թվականին վերանվանվեց Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտ:

Օրերս մոսկովյան «Независимая газета» թերթում հրապարակվեց մի ընդարձակ հոդված, որի հեղինակն է МГИМО-ի (Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտ) ռեկտոր, Ռուսաստանի Դաշնության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Անատոլի Տոբկոնովը:

«Գիտություն» թերթը նպատակահարմար գտավ ընթերցողի ուշադրությանը ներկայացնել այդ հրապարակումը (որոշ կրճատումներով): Այն վերնագրված է.



Մոսկովյան արևելագիտության ակունքներում

Ընթացիկ տարվա կարևորագույն հոբելյանների շարքում առանձնահատուկ տեղ ունի Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտի հիմնադրման 200-ամյակը:

Ինչո՞ւ նապոլեոնյան արշավանքից և 1812 թվականի Մոսկվայի հորդեհից ընդամենը 3 տարի անց, 1815 թվականին Մոսկվայում կառուցված է հիմնադրված ուսումնարանի մասին հիշողությունը արժանի է հոգատար վերաբերմունքի և հպարտության հենց այսօր՝ 21-րդ դարի սկզբին:

Նախ և առաջ նրանով, որ պատմությունը ուսումնական այս հաստատության մասին, որ կոչվեց նրա հիմնադիրների՝ մեծահարուստ վաճառականներ և բարերարներ Լազարյան եղբայրների անունով, եղել, մնում է և կա Ռուսական կայսրության պատմության պայծառ էջերից մեկը՝ որպես Եվրասիական բազմազգ տերության խոշոր նվաճումներից մեկը:

Սկսելով որպես ուսումնական համեստ մի հաստատություն, որտեղ հայ համայնքի երեխաները հնարավորություն ստացան լիարժեք սովորել և տիրապետել մայրենի և ռուսերեն լեզուներին՝ զուգահեռաբար ուսանելով ճարտասանություն, փիլիսոփայություն, մաթեմատիկա, ֆիզիկա և ստանալով եվրոպական մակարդակի կրթություն, ուսումնարանի հիմնադիրներն ու հոգաբարձուները շատ շուտով նրա դռները լայնորեն բացեցին նաև այլ ժողովուրդների ներկայացուցիչների համար: Դրանով իսկ այն դարձրին, ինչպես այսօր կանվանեին՝ ինտերմազիոնալ ուսումնական հաստատություն:

Մյուս կողմից, դարձրին խնամակալները լինելով հայ ժողովրդի ներկայացուցիչներ և դարձրին շարունակ առևտրային ամուր կապեր ունենալով արաբա-մահմեդական Արևելքի հետ, շատ շուտ հասկացան, որ կարող են օգտակար լինել Ռուսաստանին՝ ուսումնարանի պատերի ներսում պատրաստելով ապագա պետական այրերին, որոնք կտիրապետեն պարսկերեն, թուրքերեն և արաբերեն լեզուներին:

Ընթանալով այս ճանապարհով, նրանք իրենց զավակը դարձրին «արևելյան կենդանի լեզուների» հայրենական անդրանիկ և միակ դպրոցը»:

Այս ուսումնական հաստատության սաները ծանրակ-

շիռ ավանդ ունեցան 19-րդ դարակեսի ռուսական արևելյան քաղաքականության մշակման և իրականացման գործում:

Ես անհրաժեշտություն չեմ տեսնում ներկա հոդվածում վերաշարադրել ուսումնական հաստատության հարուստ պատմությունը, որ 1828 թվականից հայտնի է արդեն որպես Արևելյան լեզուների հայկական Լազարյան ինստիտուտ: Առավել ևս, որ Մոսկվայի միջազգային հարաբերությունների համալսարանի հրատարակչությունը արդեն տպագրության է պատրաստել ծավալուն հետազոտություն Լազարյան ինստիտուտի մասին:

Ուզում եմ հատկապես ընդգծել, որ Լազարյան ինստիտուտը, որ կայացել էր որպես առաջնակարգ ուսումնա հետազոտական կենտրոն և ուներ հարուստ և փայլուն գրադարան, կարողացավ ստեղծել արևելագետների ինքնատիպ և նշանավոր դպրոցը:

Ի տարբերություն Պետերբուրգի, որ Արևելքի հին և միջնադարյան պատմության և մշակույթի ուսումնասիրության գործում շեշտը դնում էր հիմնականում «լսարանային» ուսուցման վրա, Մոսկվայում, ամենևին չանտեսելով հիմնարար գիտելիքները, այնուամենայնիվ ուշադրությունը սևեղծված էր այլ խնդիրների վրա: Գնալով ռուսական պետությունը ավելի ու ավելի շատ էր զգում պրակտիկ արևելագետների՝ դիվանագետների, ադմինիստրատորների, ռազմական գործիչների և գործարար մարդկանց կարիքը, որոնք տիրապետում էին հազվագյուտ լեզուների, ծանոթ էին ոչ արևմտյան երկրների ժամանակակից իրողություններին և պատրաստ էին իրենց մասնագիտական պատրաստության սահմաններում պաշտպանել Ռուսաստանի շահերը:

Եվ ամենևին պատահական չէր, որ Ալեքսանդր Առաջինը և այնուհետև Նիկոլայ Առաջինը հատուկ հոգատարության էին արժանացրել Լազարյան ինստիտուտը և այնտեղ որպես հոգաբարձու երաշխավորել իրենց ամենամերձավոր հպատակներին՝ Ալեքսեյ Արակչեևին և Ալեքսանդր Բենկեմուրֆին:

Լազարյան ինստիտուտը միաժամանակ կատարում էր մշակութային կենտրոնի կարևոր դեր: Նրա հարուստ և ինքնատիպ գրադարանից բազմիցս օգտվել են Պուշկինը, Գոգլը, Ֆետը, Տյուտչևը և ռուսական մշակույթի այլ ականավոր ներկայացուցիչներ:

Արևելքի մասնագետների անհրաժեշտությունը ավել-

լի հրամայական դարձավ 20-րդ դարասկզբի ռուսական հեղափոխությունների շրջանում, որը համընկավ «Արևելքի արթնացման» հետ: Գիտակցումն այն բանի, որ աշխարհը թևակոխում է մի դարաշրջան, երբ Արևելքը հաստատապես կվերադարձնի իր դերակատարումը համաշխարհային պատմության մեջ, ստիպեց վերակառուցել արևելագիտական կրթությունը: 1920 թվականին Մոսկվայում, Լազարյան ինստիտուտի հիմքի վրա ստեղծվեց Մոսկվայի արևելագիտության ինստիտուտ, իսկ ավելի ուշ՝ Մոսկվայի Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտ (МГИМО-ն):

Ես համոզված եմ, որ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը (այսօր՝ համալսարան), իր ծագումնաբանությամբ սկիզբ է առնում Լազարյան և Մոսկվայի արևելագիտական ինստիտուտներից: Եվ ձևական հայտարարություն չէ: Իր արևելագիտական հիմքով մեր համալսարանը հանդես է եկել և շարունակում է նրանց փայլուն ավանդույթները:

Ինչպես և մեր նախորդները, մեր համալսարանը հաստատուն կանգնած է այն սկզբունքի վրա, որ արևելագիտության հիմքերի հիմքը լեզվաբանական փայլուն պատրաստությունն է:

...Անչափ հատկանշական է, որ Լազարյան ինստիտուտի 200-ամյա հոբելյանը կդառնա մեր համալսարանի շրջանավարտների միջազգային 3-րդ համաժողովի գլխավոր թեման:

Այն տեղի կունենա Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում, 2015 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակում: Համաժողովին կմասնակցեն հյուրեր մի քանի տասնյակ երկրներից:

Այս հոբելյանը ստիպում է մտորել այն մասին, որ շարունակականության թելերը, որ ձգվում են Լազարյան ինստիտուտից և Մոսկվայի արևելագիտության ինստիտուտից, վկայում են այն անքակտելի կապը, որ իրար է միացնում միապետական Ռուսաստանը, հորիզոնային Ռուսաստանը և մերօրյա Ռուսաստանը, որը զարգացման մոր աշխարհ է փնտրում 21-րդ դարում...

ԱՆԱՏՈՒԼԻ ՏՈՐԿՈՒՆՈՎ

Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի ռեկտոր, Ռուսաստանի Դաշնության ԳԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր

ՏԵՂԵԿԱՆԸ

Լազարյան ճեմարան (Մոսկվա)

Լազարյան ճեմարանը հայագիտական և արևելագիտական ուսումնական ու գիտական խոշոր կենտրոն էր:

Հիմնադրվել է 1815 թվականին Մոսկվայում, մեծահարուստ Լազարյանների նախաձեռնությամբ և միջոցներով: Սկզբում եղել է տարրական տիպի մասնավոր դպրոց և կոչվել Հայկական Լազարյան ուսումնարան: 1820-ական թվականներին ուսումնական ծրագրով համապատասխանել է ռուսական գիմնազիաների մակարդակին: Ընդունվել են տարբեր ազգերի 10-14 տարեկան երեխաներ, հիմնականում՝ հայեր և ռուսներ:

1827 թվականին վերանվանվել է Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտ (հայկական աղբյուրներում ավանդաբար կոչվել է Լազարյան ճեմարան), ենթարկվել է ժողովրդական կրթության նախարարությանը:

1872 թվականի մոր կանոնադրությամբ Լազարյան ճեմարանը կազմվել է երկու ուսումնական հաստատություններից՝ դասական գիմնազիայից և եռամյա ուսուցմամբ մասնագիտական դասարաններից (արևելյան լեզուների ֆակուլտետ): Արևելյան լեզուների ֆակուլտետը իր ուսումնական մակարդակով համապատասխանել է բարձրագույն ուսումնական հաստատություններին:

Լազարյան ճեմարանը իր գոյության ընթացքում միշտ պահպանել է հայկական դիմագիծը՝ հայերեն են դասավանդվել հայագիտական առարկաները, ուսուցչական-դասախոսական կազմի և սաների մեծ մասը եղել են հայեր, ղեկավարությունը (տնօրինություն և հոգաբարձություն) հիմնականում գտնվել է հայերի ձեռքում: 1844 թվականին Լազարյան ճեմարանում սովորել է 105 սան, որից 73-ը՝ հայ, 30-ը՝ ռուս, 2-ը՝ այլ ազգի: Ճեմարանը իրավամբ մեծարվել է «Մայր դպրանոց», «Սերմնացան հայոց դպրոցաց» անուններով: Լազարյան

ճեմարանի շնորհիվ հայ դպրոցները, հայ կրթական գործիչները հաղորդակցվել են ռուսական և եվրոպական առաջավոր մտքին: Ճեմարանի շուրջ համախմբված հայ մտավորականների՝ Մ. Նալբանդյանի, Ս. Նազարյանի նախաձեռնությամբ ու ջանքերով է դրվել Մոսկվայի հայ մամուլի հիմքը: Ճեմարանն ուներ տպարան, որը լույս է ընծայել 13 լեզուներով գրականություն: Ճեմարանի գրադարանի հավաքածուն (1913 թվականին՝ 40 հազար գիրք) հետագայում դարձել է Երևանի ազգային գրադարանի հիմնարար ֆոնդերից մեկը: Լազարյան ճեմարանն ուներ նաև իր թատրոնը: Այժմ ճեմարանի շենքում ՀՀ դեսպանությունն է:

Ճեմարանում սովորել են բանաստեղծներ Ռ. Պատկանյանը, Գևորգ Դուրդյանը, Հ. Հովհաննիսյանը, Վ. Տերյանը, մանկավարժներ Գ. Աբովյանը, Ս. Մանդիսյանը, Ա. Բահաթյանը, նկարիչների Վ. Սուրենյանը, Ե. Թադևոսյանը, Հ. Պատկանյանը, թատերական գործիչ-

ներից՝ Մամիկոն Գևորգյանը, Ս. Տիգրանյանը, Ռ. Սիմոնովը, Է. Տեր-Գրիգորյանը, Գ. Պետրոսյանը, Գ. Չուբարը, գիտնականներից ու գրականագետներից՝ Յուլիա Խանգադյանը, Պողոս Մակինյանը, Ս. Բարխուդարյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը, ճեմարանի սաներից են եղել նաև հեղափոխական Ա. Մյասնիկյանը, Լև Տոլստոյը, Իվան Տուրգենևը, Կոնստանդին Ստանիսլավսկին, Միխայիլ Գլինկան, Յու. Վեսելովսկին: Ինստիտուտի արխիվներում պահպանվել է Սիմանսկի եղբայրների անհատական գործերը, որոնցից մեկին վիճակված էր դառնալ Մոսկվայի և Համայն Ռուսիո Սրբազան Պատրիարք Ալեքսեյ Առաջին:

Լազարյան ճեմարանն այն հազվագյուտ ուսումնական հաստատություններից էր, որտեղ առանց ազգային ու դավանանքի խտրության ուսանում էին հայեր, ռուսներ, վրացիներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ:



ՀՀ ԳԱՍ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱՍ սփյուռքի բաժինը

ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԳԱ թղթակից անդամ Միխայիլ Պիոտրովսկին ծնվել է 1944 թվականի դեկտեմբերի 9-ին Երևանում: Հայրը՝ Նշանավոր հնագետ Բորիս Պիոտրովսկին, 1964-1990 թթ. եղել է Էրմիտաժի տնօրենը, մայրը՝ Հովիտյան Զատիկյանը նույնպես հնագետ էր: Ամուսնացած է, ունի որդի և դուստր:

1967 թվականին Միխայիլ Պիոտրովսկին ավարտել է Լենինգրադի պետական համալսարանի արևելյան ֆակուլտետի արաբական բանասիրության բաժինը: 1965-1966 թթ. վերապատրաստվել է Եգիպտոսում՝ Կահիրեի համալսարանում: 1973 թ. Մ. Պիոտրովսկին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Լեգենդ Դիմյարի թագավոր Ասսադ ալ-Կամիլի մասին» թեմայով, ապա 1985 թ.՝ դոկտորական ատենախոսություն՝ «Հարավային Արաբիան վաղ միջնադարում, միջնադարի հասարակության գործընթացները» թեմայով:

Միխայիլ Պիոտրովսկի

1967-1991 թթ. Մ. Պիոտրովսկին աշխատել է արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքում:

Մ. Պիոտրովսկու գիտական հետաքրքրություններն են՝ Միջին արևելքի հին և միջնադարի պատմություն, Եմենի պատմություն, Ղուրան, իսլամի վաղ պատմություն, թանգարանային գործ, հնէաբանություն:

Նա մասնակցել է հնագիտական պեղումների Կովկասում, Կենտրոնական Ասիայում և Եմենում: 1981-1992 թթ. Մ. Պիոտրովսկին գլխավորել է ԽՍՀՄ-Եմենական արշավախմբի ջոկատը, իսկ 1989-1991 թթ. եղել է արշավախմբի ղեկավարը:

Հոր՝ Էրմիտաժի տնօրեն, ակադեմիկոս Բորիս Պիոտրովսկու մահից հետո, 1991 թ. նա հրավիրվել է Էրմիտաժ՝ որպես փոխտնօրեն, իսկ 1992 թ. հուլիսին Ռուսաստանի կառավարության որոշմամբ Մ. Պիոտրովսկին նշանակվել է Պետական Էրմիտաժի տնօրեն:

Մ. Պիոտրովսկին Ռուսաստանի Դաշնության նախագահին կից մշակույթի և արվեստի խորհրդի նախագահի տեղակալն է, ՌԴ նախագահին կից պետական մրցանակներ շնորհող հանձնաժողովի անդամ:



Մ. Պիոտրովսկին Պետերբուրգիցիների համաշխարհային ակումբի նախագահն է, Սանկտ-Պետերբուրգի «Ալյանս Ֆրանսեզի» նախագահը, Սանկտ-Պետերբուրգի Եվրոպական համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահը:

Մ. Պիոտրովսկին «Քրիստոնյա Արևելք» ամսագրի գլխավոր խմբագիրն է, Եվրոպայի խորհրդին կից ցուցահանդեսների գծով փորձագիտական հանձնաժողովի անդամ:

Մ. Պիոտրովսկին Սանկտ-Պետերբուրգի մտավորականների համագումարի նախագահն է, Հումանիտար գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, Ռուսաստանի թանգարանների միության նախագահը, թանգարանների միջազգային խորհրդի անդամ է, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ռուսաստանի կոմիտեի անդամ:

Մ. Պիոտրովսկին ավելի քան 250 գիտական աշխատանքների հեղինակ և համահեղինակ է:

1996 թ. Նիդեռլանդներում նա պարգևատրվել է թագավորական տան Օրանսկ Նասսաու շքանշանով: Մ. Պիոտրովսկին գրականության և արվեստի բնագավա-

ռում ՌԴ նախագահի մրցանակի դափնեկիր է, 1997 թ. պարգևատրվել է Ռուսաստանի Դաշնության Պատվո շքանշանով:

1997 թ. ի հիշատակ հայր և որդի՝ Բորիս և Միխայիլ Պիոտրովսկիների, Աստղագիտական միջազգային խորհուրդը հայտնաբերված մոլորակներից մեկը անվանակոչել է Պիոտրովսկի:

1998 թ. նա պարգևատրվել է Ֆրանսիայի Պատվո Լեգեոնի շքանշանով: 1999 թ. Շվեդիայում նա պարգևատրվել է Հյուսիսային աստղ շքանշանով: 2004 թ. դեկտեմբերի 27-ին Միխայիլ Պիոտրովսկին ստացել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 4-րդ աստիճանի շքանշան:

2001 թ. նա ընտրվել է OPT հեռուստաընկերության տնօրենների խորհրդի նախագահ:

2007 թ. մայիսի 18-ին Ռուսաստանի և ճապոնիայի ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների և մշակութային հարաբերությունների ամրապնդման գործում մեծ ներդրում ունենալու համար Միխայիլ Պիոտրովսկուն շնորհեցին ճապոնիայի պետական պարգևներ՝ Ծագող արևի աստղ շքանշան, ոսկյա և արծաթյա աստղեր: Այս կապակցությամբ նա նշում էր, որ աշխատանքի այդ բարձր գնահատականը ամբողջ Էրմիտաժին է և կարևորվում է նրանով, որ այն շնորհվել է Թանգարանների միջազգային օրը:

Մ. Պիոտրովսկին համագործակցում է ՀՀ ԳԱՍ Փորձաքննությունների ազգային բյուրոյի հետ՝ բարելավման ու կատարելագործման մշակութաբանական և մյութագիտական փորձաքննությունների բնագավառում և այդ գիտագործնական ոլորտում իրականացնում առաջավոր փորձի փոխանակում: Պիոտրովսկին ՀՀ ԳԱՍ Փորձաքննությունների ազգային բյուրոյի աշխատակիցների համար վերապատրաստման դասընթացներ է կազմակերպել Էրմիտաժում գործող գիտատեխնիկական փորձաքննությունների բաժնում:

Հաշվի առնելով Միխայիլ Պիոտրովսկու գիտական ձեռքբերումները և սերտ կապերը Հայաստանի հետ, բարձր գնահատելով նրա ավանդը գիտության մեջ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2008 թվականին նրան ընտրել է ԳԱՍ արտասահմանյան անդամ:

Այսօր էլ ՀՀ ԳԱՍ Փորձաքննությունների ազգային բյուրոն ակտիվորեն համագործակցում է Միխայիլ Պիոտրովսկու հետ:

Սփյուռքի բաժին

ՀՀ ԳԱՍ-ն պատվավոր դոկտորի կոչում է շնորհեց ՄՄՀԳ ինստիտուտի ռեկտոր Անատոլի Տորկունովին

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան պատվավոր դոկտորի կոչում շնորհեց Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի (ՄԴԻՄՈ) ռեկտոր Անատոլի Տորկունովին՝ Հայաստանի դիվանագիտական կադրերի պատրաստման գործում ունեցած մեծ ներդրման համար: Այս որոշումը ՀՀ ԳԱՍ նախագահությունն ընդունեց սույն թվականի սեպտեմբերի 30-ին՝ ՀՀ ԳԱՍ նախագահության նիստում:

Անատոլի Տորկունովը ծնվել է 1950 թ.՝ Մոսկվայում: 1972 թ. ավարտել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի միջազգային հարաբերություններ ֆակուլտետը: 1979 թ. Տորկունովը ստացել է դոցենտի, 1991 թ. պրոֆեսորի, 1995 թ.՝ քաղաքական գիտությունների դոկտորի աստիճան: 2003թ. ընտրվել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի (ՌԳԱ) թղթակից անդամ, իսկ 2008 թ. ընտրվել է ՌԳԱ-ի ակադեմիկոս:

Անատոլի Տորկունովը 1983 թ. եղել է Վաշինգտոնում ԽՍՀՄ-ի դեսպանատան երկրորդ քարտուղարը, 1986թ.՝ առաջին քարտուղարը: 1992թ. կոլեկտիվի ընդհանուր ժողովում ընտրվել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական

ինստիտուտի ռեկտոր և վերընտրվել է 1997, 2002, 2007, 2012 թվականներին: 2015թ. Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը հաստատեց Անատոլի Տորկունովին Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի ռեկտորի պաշտոնում:

Նա մի շարք արտասահմանյան համալսարանների պատվավոր դոկտոր է, տարբեր ամսագրերի խմբագրական կոլեգիաների անդամ, այդ թվում «Համաշխարհային տնտեսություն և միջազգային հարաբերություններ», «Միջազգային կյանք», «Ռուսաստանը գլոբալ քաղաքականության մեջ», «Իրավունք և կառավարում, XXI դար», «Միջազգային իրավունքի մոսկովյան ամսագիր»:

Պարգևատրվել է Բարեկամության շքանշանով, Փառքի շքանշանով, Հայրենիքին մատուցած ծառայությունների համար երրորդ և չորրորդ աստիճանների, Սերգեյ Ռադոնցևսկու երկրորդ և երրորդ աստիճանների շքանշաններով, ունի Ֆրանսիայի, Լեհաստանի, Կորեայի Հանրապետության, Մոնղոլիայի, Բուլղարիայի, Ղրղզստանի, Ղազախստանի, Բելառուսի պետական պարգևներ:

ՀՀ ԳԱՍ Տեղեկատվական-վերլուծական կենտրոն

Երևանում կայացավ Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողովը

ՀՀ ԳԱՍ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում կայացավ Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողովը: Գիտաժողովի բացմանը ներկա էին ՀՀ սփյուռքի փոխնախարար Ս. Սրապիոնյանը, ՀՀ լեզվի պետական տեսչության պետ Ս. Երիցյանը, ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչներ, ակադեմիական և բուհական համակարգերի ներկայացուցիչներ, այլ հյուրեր: Բացելով լիազուրկ միստը լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանը կարևորեց գիտաժողովների դերը գիտության զարգացման, գիտական ձեռքբերումների համարյա ցանցում առնումներով: Գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին և գիտական նոր հաջողություններ մաղթեցին ՀՀ ԳԱՍ ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը, Ս. Սրապիոնյանը, Ս. Երիցյանը: Լիազուրկ միստում իրենց զեկուցումները ներկայացրին ՀՀ ԳԱՍ թղթակից անդամներ Լ.Հովհաննիսյանը, Ա. Դուլուխանյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Համբարձումյանը, բանասիրական գիտությունների թեկնածու Ն.Պողոսյանը, Ֆրանսիան ներկայացնող հայագետ Տ.Դալալյանը և ուրիշներ: Գիտաժողովին մասնակցում էին հայագետներ Հայաստանի Հանրապետությունից և Արցախից, Ֆրանսիայից, Ռուսաստանի Դաշնությունից և ԱՄՆ-ից: Եռօրյա գիտաժողովում լավեցին հինգ տասնյակ զեկուցումներ՝ նվիրված հայոց լեզվի ուսումնասիրության գրեթե բոլոր ոլորտներին:

ՀՀ ԳԱՍ Տեղեկատվական-վերլուծական կենտրոն

Միջազգային չորրորդ գիտաժողով՝ «Մեղրի – 2015»

Հավատարիմ մնալով իր գիտակազմակերպչական գործունեությանը, 2015 թվականի սեպտեմբերի 14-ին ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում (ՖԿՊԻ) մեկնարկեց ավանդական դարձած «Էլեկտրոնների, պոզիտրոնների, նեյտրոնների և ռենտգենյան ճառագայթների ցրումը արտաքին ազդակների առկայությամբ» միջազգային գիտաժողովը, որին մասնակցում էին արտերկրից ժամանած ֆիզիկոսներ (Գերմանիա, Իտալիա, Իրան, Մեծ Բրիտանիա, Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա):

Մասնակիցների թվում էին նաև ՌԴ Տոմսկի ճարտարագիտական համալսարանի և ՀՀ ԳԱԱ ՖԿՊԻ-ի համատեղ լաբորատորիայի, ինչպես նաև հայ-իտալական գիտակրթական միջազգային լաբորատորիայի աշխատակիցները:

Գիտաժողովի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ սեպտեմբերի 15-ին ՀՀ ԳԱԱ ՖԿՊԻ-ում: Բացման խոսքում ՖԿՊԻ գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ալպիկ Մկրտչյանը կարևորեց նմանատիպ գիտաժողովների անցկացման կարևորությունը և անհրաժեշտությունը:

Ողջույնի խոսքով հանդես եկան ՖԿՊԻ-ի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Հ. Մկրտչյանը, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար, ֆ.մ.գ.դ. Լ. Մարդոյանը, ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Յու. Չիլինգարյանը, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պրոֆեսոր Ալ. Բաղդասարյանը (ՌԴ):

Քննարկվեցին գիտաժողովի ուղղվածությամբ ստացված նորագույն արդյունքները՝ նպատակ հետապնդելով հաստատված համագործակցության էլ ավելի ամուր հիմքերի ապահովման ու համատեղ արդիական հետաքրքրություններ կայացնող թեմաների մշակման համար:

Գիտաժողովի ողջ ընթացքը մեկ անգամ ևս հաստատեց, թե որքան կարևոր են այս կամ այն խնդրին առնչվող տարբեր երկրներում ստացված արդյունքների համատեղ քննարկումները, հարց ու պատասխանների ընթացքում շատ ու շատ խնդիրների ինքնատիպ մեկնաբանությունները և նոր խնդիրների քննարկումների անհրաժեշտությունը:

Գիտաժողովի հանդիսավոր փակման արարողությունից հետո, սեպտեմբերի 17-ից 20-ը Մեղրի քաղաքում կազմակերպվեց հայազգի հանրաճանաչ գիտնական Գուրգեն Ասկարյանի անվան երիտասարդ գիտնականների միջազգային դպրոցը, որտեղ զեկուցումով հանդես եկան արտերկրից ժամանած հեղինակավոր ֆիզիկոսներ: Դպրոցի ունկնդիրների թվում էին տեղացի և արտասահմանցի ավելի քան 50 ուսանողներ, մագիստրանտներ, ասպիրանտներ և երիտասարդ գիտնականներ:

Հարկ է նշել, որ իր ողջ պատմության ընթացքում ՖԿՊԻ տնօրինությունը հատուկ և հոգատար ուշադրություն է դրսևորել երիտասարդ գիտնականների հանդեպ:

Գիտաժողովի աշխատանքներին իր համեստ նպաստն էր բերել Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը:

Գիտաժողովի մասնակիցներին տրվել է ՖԿՊԻ-ի միջոցներով տպագրված Գուրգեն Ասկարյանի հիշատակը հավերժացնող «Гурген Ашотович Аскарян» մեմագրությունը, որը երիտասարդ գիտնականների արտագնա դպրոցի համար գրել է անվանի ֆիզիկոս, Գուրգեն Ասկարյանի մտերիմ Բորիս Բոլոտովսկին:

Գիտաժողովը և երիտասարդ գիտնականների դպրոցը իրականացվել են երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի, ՀՀ ԳԴԿ-ի և ՖԿՊԻ-ի ֆինանսական աջակցությամբ:

*Ասատուր ՓՆՇԱՅԱՆ
ՖԿՊԻ-ի ավագ գիտաշխատող*

ՀՀ ԳԱԱ-ում անցկացվեց «Քիմիական ֆիզիկայի արդի խնդիրները» IV միջազգային գիտաժողովը

Սույն թվականի հոկտեմբերի 5-ին՝ ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում մեկնարկեց «Քիմիական ֆիզիկայի արդի խնդիրները» IV միջազգային գիտաժողովը: Գիտաժողովի նպատակն էր ընդհանրացնել քիմիական ֆիզիկայի բնագավառում վերջին տարիներին ստացված արդյունքները, միջազգային գիտական հանրությանը ծանոթացնել ՀՀ ԳԱԱ Արամ Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի և Հայաստանի մի շարք այլ գիտական կենտրոնների վերջին տարիների գիտական մշակումներին:

Գիտաժողովին մասնակցում էին շուրջ 150 գիտնականներ՝ այդ թվում ավելի քան 70 գիտնականներ Ռուսաստանի Դաշնությունից, Բելառուսից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Իտալիայից, Ավստրիայից և Շվեյցարիայից:

Գիտաժողովի ընթացքում անցկացվեցին 21 պլենար դասախոսություն, 42 բանավոր և 52 ստեղծագործական զեկուցումներ: Գիտաժողովի շրջանակներում կայացավ երիտասարդ մասնագետների լավագույն զեկուցումների մրցույթ, որի հաղթողները արժանացան պատվոգրերի և հուշանվերների:

Գիտաժողովի ընթացքում եղան ժամանակակից քիմիական ֆիզիկայի առաջնային ուղղություններում (բարդ քիմիական ռեակցիաներ ու շղթայական պրոցեսներ, կատալիզ, մանոյութների ստացում և կիրառում, նոր սերնդի նյութերի ստացման և հետազոտման եղանակներ, այրման ռեժիմում նյութերի ստացում, քիմիական ֆիզիկայի բժշկականաբանական հիմնահարցեր, նյութի կառուցվածք, բնապահպանություն և քիմիական անվտանգություն և այլն) վերջին մի քանի տարիներին ստացված կարևորագույն արդյունքներն ընդհանրացնող դասախոսություններ ու զեկուցումներ, քննարկվեցին քիմիական ֆիզիկայի զարգացման հեռանկարները, քիմիական ռեակցիաների նպատակային ղեկավարման և նոր նյութերի ստացման հիմնարար ու կիրառական հիմնահարցերը:

«Քիմիական ֆիզիկայի արդի խնդիրները» IV միջազգային գիտաժողովն անցկացվեց ՀՀ կրթության և գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, ՀՀ ԳԱԱ քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքի աջակցությամբ:

ՀՀ ԳԱԱ Տեղեկատվական-վերլուծական կենտրոն

Օրերս ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում նշվեց ՀՀ ԳԱԱ Երևանի Բուսաբանական այգու հիմնադրման 80-ամյա հոբելյանը: Նիստի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի տնօրեն Ժիրայր Վարդանյանը: Շնորհավորական ելույթով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

Նա մասնավորապես ասաց. «Բուսաբանության ինստիտուտը և Բուսաբանական այգին մեր ակադեմիայի հնագույն կազմակերպություններից են, որոնք անցած 80 տարիների ընթացքում ծառայել են հայ գիտությանը, մեր երկրի բուսական աշխարհի ուսումնասիրություններին»:

ՀՀ ԳԱԱ-ում նշվեց Երևանի բուսաբանական այգու հիմնադրման 80-ամյա հոբելյանը

րին, բնապահպանական տարբեր խնդիրների լուծմանը: Բուսաբանական այգին և բուսաբանության ինստիտուտը միասին լինելը շատ լավ է, շատ պատվաբեր է, բայց մյուս կողմից՝ դժվարությունների աղբյուր, որովհետև Բուսաբանական այգին ինքը, առանձին վերցրած պահանջում է մեծ աշխատանք, մեծ ներդրումներ, մեծ ուշադրություն: Ցավոք սրտի, այդ ասպարեզում մենք ունենք բավականին դժվարություններ: Պիտի ասեմ, որ վերջերս ՀՀ կառավարությունն անդրադարձել է այս հարցին, և սպասում ենք որոշակի որոշումների, որոնք պիտի նպաստեն և՛ Բուսաբանական այգու, և՛ ինստիտուտի գործունեությանը»:

ՀՀ բնապահպանության նախարար Արամյա Գրիգորյանի շնորհավորական ուղերձն ընթերցեց ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Սիմոն Պապյանը: Ուղերձում մասնավորապես նշված է. «ՀՀ բնապահպանության նախարարության և անձամբ իմ անունից ողջունում են Երևանի բուսաբանական այգու ողջ կոլեկտիվին՝ 80-ամյա հոբելյանի կապակցությամբ: Իր գոյության 80 տարիների ընթացքում Բուսաբանական այգուն ստեղծված հարուստ և բազմազան բուսական հավաքածուները ծառայել են որպես ուսումնական բազա հանրապետության կրթական հաստատությունների, մասնագետների և մեզ՝ բոլորիս համար: Այգին յուրահատուկ ռեկրեցիոն օջախ է մայրաքաղաքի, ինչու չէ՞ նաև հանրապետության բնակչության համար: Այստեղ ներառված մի շարք հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բուսատեսակների հավաքածուից 38-ը ներառվել են Հայաստանի Հանրապետության կարմիր գրքի նոր հրատարակության մեջ: ...»:

Շնորհավորական ելույթներով հանդես եկան նաև ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների



կառավարման գործակալության պետ Արտաշես Զիրոյանը, Հայաստանի ագրարային համալսարանի գիտության դեպարտամենտի պետ, պրոռեկտոր Դանիել Պետրոսյանը, Կուբանի պետական համալսարանի պրոֆեսոր Սվետլանա Լիտվինսկայան, Դաղստանի լեռնային բուսաբանական այգու ներկայացուցիչ Զարիար Զիյարատը:

ՀՀ բնապահպանության նախարարի հրամանով Հայաստանի Հանրապետության բնապահպանության բնագավառում նշանակալի ներդրում ունենալու համար և Երևանի բուսաբանական այգու հիմնադրման 80-ամյակի կապակցությամբ ՀՀ բնապահպանության նախարարության գերատեսչական ոսկե մեդալ շնորհվեց ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի զվխավոր գիտաշխատող, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գոհար Օզանեզովային: ՀՀ բնապահպանության նախարարի անունից պատվոգրեր հանձնվեցին ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի մի խումբ առաջատար գիտնականներին:

Բուսաբանության ինստիտուտի գիտաշխատողներին պարգևատրեց նաև ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան: ՀՀ ԳԱԱ վաստակագիր և ՀՀ ԳԱԱ պատվոգրեր շնորհվեցին մի մեծ խումբ աշխատողների:

Հոբելյանական միջոցառմանը հաջորդեց «Բուսաբանական գիտությունը ժամանակակից աշխարհում» միջազգային գիտաժողովը, որը նույնպես նվիրված է ՀՀ ԳԱԱ Երևանի բուսաբանական այգու հիմնադրման 80-ամյա հոբելյանին: Գիտաժողովին մասնակցում են գիտնականներ ինչպես Հայաստանից և Արցախից, այնպես էլ Ավստրիայից, Աբխազիայից, Բոսնիա-Հերցեգովինայից, Բելառուսից, Խորվաթիայից, Ղազախստանից և Ռուսաստանի տարբեր մարզերից:

ՀՀ ԳԱԱ-ում կայացավ ԱՊՀ մասնակից պետությունների հիմնարար գիտությունների համագործակցության հորհրդի 4-րդ նիստը

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում կայացավ ԱՊՀ մասնակից պետությունների հիմնարար գիտությունների համագործակցության հորհրդի 4-րդ նիստը:

Մասնակիցներին ողջունեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Նիստին մասնակցում էին Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի Դաշնության ինչպես նաև ԱՊՀ-ի գործադիր կոմիտեի ներկայացուցիչները: Քննարկվեցին համագործակցության հետագա զարգացման հարցերը, ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների գիտական հետազոտությունների միջպետական հիմնադրամի ստեղծման հեռանկարները: Հավանության արժանացան ԱՊՀ մասնակից պետություններում ընդհանուր գիտական և ինովացիոն տարածության ձևավորմանն ուղղված գիտաժողովների անցկացման և ԱՊՀ մասնակից պետություններում հիմնարար հետազոտությունների միջազգային գիտական կենտրոնների ստեղծման առաջարկները:

Նիստում նշվեց ՀՀ ԳԱԱ-ի նշանակալից աշխատանքը՝ ուղղված ԱՊՀ մասնակից պետությունների գիտնականների հետ գիտական կապերի պահպանմանը և զարգացմանը:

ՌՈՒԲԵՆ ՍԱՖԵՐԱՍՏՅԱՆ – 60



Լրացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, անվանի գիտնական և վաստակաշատ արևելագետ Ռուբեն Արամի Սաֆրաստյանի ծննդյան 60- տարին:

Այս առիթով ՀՀ ԳԱԱ նախագահության, հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ողջույնի ուղերձում մասնավորապես ասված է.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌՈՒԲԵՆ ԱՐԱՄԻ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻՆ

Մեծարգո՝ Ռուբեն Արամի

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը ի խորոց սրտի ողջունում և շնորհավորում են Ձեզ՝ Ձեր ծննդյան 60-ամյակի առթիվ:

Ձեր բնատուր տաղանդի, լայնախոհության, վերլուծական մտածողության և աշխատասիրության շնորհիվ Դուք մեծ դերակատարություն ունեք հայ պատմագիտության, մասնավորապես թուրքագիտության զարգացման գործում: Թուրքիայի նոր և նորագույն պատմության, Թուրքիայի արտաքին քաղաքականության, ցեղասպանագիտության ուղղությամբ Ձեր աշխատությունները մնայուն ներդրում են հայ արևելագիտության բնագավառում: Մենք գոհունակությամբ ենք նաև նշում, որ Դուք հայ արևելագիտությունը միշտ էլ հավուր պատշաճի եք ներկայացնում միջազգային համայնությանը:

Հարգելի՛ հորեյար, այսօր մենք հաճույքով կարևորում ենք Ձեր զգալի ներդրումը մեր հանրապետությունում արևելագիտական ուսումնասիրությունների կազ-

մակերպման ու զարգացման գործում: Աշխատելով Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում Դուք արդյունավետորեն համատեղեցիք գիտնականի ու գիտության կազմակերպչի աշխատանքը: Ձեր ղեկավարությամբ ինստիտուտը շարունակել ու ամրապնդել է արևելագիտական ուսումնասիրությունների և գիտական բարձրորակ կադրերի պատրաստման լավագույն ավանդույթները՝ նոր բարձունքի բարձրացնելով ինստիտուտի գործունեությունը: Այսօր Ձեր կրթած ու դաստիարակած արևելագետների մի հսկայական բանակ արարում է մեր հանրապետության քաղաքական, գիտական, հասարակական կյանքում և կրթական համակարգում:

Հորեյարն առիթ է մարդկանց հոգում և մտքում կուտակված զգացումներն ու ցանկություններն արտահայտելու: Օգտվելով առիթից՝ մենք հավաստում ենք Ձեզ, սիրելի՛ հորեյար, մեր խորին հարգանքը Ձեր նկատմամբ, մաղթում քաջառողջություն, արևշատություն, երջանկություն և ակնկալում սաֆրաստյանական նոր ձեռքբերումներ՝ ի շահ հայ գիտության, ի շահ հայ ժողովրդի:

**ՀՀ ԳԱԱ նախագահություն,
ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական
գիտությունների բաժանմունք**

ԲՈՐԻՍ ԼԱԶԱՐԵՎՍԿՈՒ ՌԻՇԱԳՐԱՎ ՊԱՏՄՎԱԾՔԸ

XX դարի 10-ական թվականների ռուս գրական գործիչների շարքում, ովքեր իրենց ստեղծագործություններում արտացոլել են հայ իրականությունը, յուրահատուկ տեղ է գրավում իր ժամանակի ճանաչված արձակագիր Բորիս Լազարևսկին (1871-1936): Լինելով ուկրաինացի պատմաբանի որդի, նա կրթություն է ստացել Կիևի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, ապա պաշտոններ զբաղեցրել ռազմական ու ծովային գերատեսչություններում: Ռուս-ճապոնական պատերազմից հետո նվիրվել է գրականությանը. գրել է հիմնականում սիրային թեմաներով վեպեր, վիպակներ, պատմվածքներ՝ նմանակելով Չեխովին և իրեն համարելով կանանց հոգու մասնագետ-հոգեբան:

Նորահայտ վկայությունները ցույց են տալիս, որ հայկական, նաև՝ ռուսական միջավայրում այսօր քիչ հայտնի գրողը, սակայն, տասնամյակներ շարունակ կապված է եղել Հայաստանի ու նրա մշակույթի հետ, որն էլ իր արտացոլումն է գտել նրա գրական-հասարակական գործունեության մեջ: Մասնավորապես, 1919-1920 թթ. Բ. Լազարևսկին Ռուսաստանի հարավային հայաշատ քաղաքներում, Թիֆլիսում և Երևանում «Հայաստանի կանայք և աղջիկները» թեմայով դասախոսությունների շարք կարդալուց, մամուլում իր ստեղծագործություններից մի քանիսը տպագրելուց հետո, 1920 թ. կեսերին ժամանում է Կ. Պոլիս՝ Փարիզ մեկնելու մտադրությամբ: Այստեղ նա «Ճակատամարտ» թերթի հոկտեմբերյան համարներում արևմտահայերենով հրապարակում է «Հայաստանի կանայք և աղջիկները» խորագրով ակնարկ-ուսումնասիրությունը: Այնուհետև «Հայ կին» կիսամյա հանդեսը իր նոյեմբերի 1-ի համարում (էջ 402-403) թարգմանաբար տպագրում է ռուս գրողի «Օտար երկրի մեջ (պատմվածք): Օր. Սիրանույշ Ապյանցի հիշատակին» խորագրով գործը: Ստորև ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում Բ. Լազարևսկու այդ ուշագրավ պատմվածքը:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

«Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալ, բանասիրական գիտությունների դոկտոր

Կարոտաբաղձ առանձնության մը զգացումն տարված՝ կերթայի Թիֆլիսի տաք փողոցներեն, քաջբշելով ինքզինքն գինովի մը պես, արևի ճառագայթներուն տակ, և կը մտածեի. «Ահա, հիմա, պիտի ընկճվիմ և պիտի մեռնիմ, օտար երկրի մեջ. հետո, պիտի փոխվիմ ոչինչի, կամ պիտի թռչիմ երկրի մը, ուր օտար երկիրը ոչ ոքի ծանոթ է, և ուր ամեն մարդ գիրար կը ճանչնա փոխադարձաբար, առանց բառ ըսելու, և ուր ամենուն համար հայրենիքն է...»:

Բնագղներուն ամենն վատը, — ինքնապահպանության բնագղը, — զիս մղեց դեպի սրճարան մը, որուն դրսերնույթը զով ըլլալ կը խոստանար: Սիրուն նաժիշտներ, թեթևաշարժ, կ'սպասարկեին. պառավ արկղակալուհի մը, զգվող և հանդարտ աչքերով, դրամի ավելցուկը կու տար, ծխելով նուրբ սիգարեթը, և նոթագրելով բան մը քառակուսի թուղթի մը ծայրը:

Քանի մը անգլիացիներ մերս մտան և պաղարյուն կերպով տեղավորվեցան սեղանի մը առջև: Ցած ձայնով կը խոսեին գործի մը վրա: Պատուհանին մոտ, երկու վառ թխուհիներ, սպիտակ արդուզարդերով, իրենց պաղպաղակը կ'ըմբռնեին: Անոնցմե մին ավելի մեծ էր, իսկ մյուսը կ'երևեր հազիվ տասնվեց տարու, մթին և նվաղկոտ աչքերով, որոնց մեջ կը կարդացվեր թերևս թե ան ալ կրնար թռչիլ դեպի հոն՝ ուր հայրենիքը ամենունն է...

Իմ մոտս միշտ եղած է ամեն բան գուշակելու կարողությունը...

Եվ հանկարծ, հիշեցի այն զրեթե նույնաման աչքերը, զորս տեսել էի քսան տարի առաջ, նախ շոգեկառքի վագոնի մը մեջ, և հետո, հոս, այս միևնույն քաղաքի մեջ: Այդ առեմները կրնայի տակավին կախարդվիլ այդ երկար թարթիչներով քաղցր աչքերուն պզտիկ մեկ ակնարկեն:

Մանկամարդուհին կը ճամփորդեր իր հորն ու մորը հետ առաջին կարգի վագոնով, և կարծես թե, արտասահմանն կուգար: Իրար ծանոթացանք, բայց շատ քիչ խոսեցանք, հակառակ անոր որ մեկտեղ ճամփորդեցինք օրերով: Միայն հաջողեցա հասկանալ, թե մանկամարդ աղջկան հայերեն անունը կը համապատասխաներ ռուսերեն «Սեր» բառին, թե՛ ան նախորդ տարի ավարտած

ՕՏԱՐ ԵՐԿՐԻ ՄԵՋ

Օր. Սիրանույշ Ապյանցի հիշատակին

Եր գիմնագիտի ընթացքը, և թե կարդալ շատ կը սիրեր. հետո, կը տեսնվեր թե, ասոնք հարուստ մարդեր էին:

Գեղեցկություն, հարստություն և երիտասարդություն — երեք գործակալներ, ինչպես կը սիրեն արտահայտվիլ Պ. Պ. Մարքսիստները, որոնք անձնական երջանկությունը կ'ապահովեն: Բայց, ի մեջ այլոց, առաջին զգացումը, որ հայտնվեցավ իմ մեջս, մանկամարդուհին ճանչնալես հետո, — եղավ այն տեսակ մը լուռ, հուսահատ, անարտահայտելի զգացումը, որով կը տոգորվի մարդ եկեղեցին դուրս ելած ատեն հոգեհանգստյան պատարագի մը ավարտելուն, եկեղեցական մեղեդիներու կատարյալ դպրասացութենն մը հետո:

Մանկամարդ աղջկան անունը, — «Սեր» — ոչինչ չխոսեցավ ինձ ուրախության կամ երջանկության համար, և չեմ գիտեր ինչու՝ հիշեցի Գնոդ Համսընի ըսվածքը. «Սերը անբռնաբարելի կնիք մըն է, որ կը պահպանվի ամբողջ կյանքի մեջ, կը պահպանվի մինչև մահ, և կը պահպանվի մահեն իսկ վերջ»:

Սակայն, գրավելու համար իմ ճամփու ընկերուհիս, ջանացի պատմել զվարթ և ծիծաղելի բաներ, և կը հրճվեի իր ժպիտը տեսնելով:

Վագոնի պատուհանին առջևն էինք, և կը դիտեինք Էլպրուսի տակավին վարդորակ կատարները, որոնք տակավին մարել կ'սկսեին:

Գիշերը շոգեկառքը կանգ առավ մեծ կայարանի մը մոտիկը, ուր ժամանակ ունեցա զավաթ մը թեյ առնելու, և գնելու Չեխովեն պզտիկ հատոր մը, պարունակող իր հոյակապ պատմվածքը՝ «Գեղեցկությունները» («Գեղեցկուհիներ» — Ա. Զ.):

Ճամփորդություննիս շարունակեցինք:

Փափագը ունեցա այդ գիրքը նվիրելու օրիորդին և արձնագրելու մեջը՝ որո՛ւ և որմե՛. այդպես էր, որ հասկցա իր անունը: Աչքերու համեմատ շարժմունով մը շնորհա-

կալ եղավ ինձի: Հետո իրարմե բաժնվեցանք, հանգչելու համար մեր կիսաբաժիններուն մեջ:

Հակառակ անոր որ պառկեի էի, և աչքերս փակեր, չէի կրնար մոռնալ: Սերը արդեն իսկ ուղեղես մերս թափանցած՝ հոգիս կը գրգռեր զիս: Միայն Համսընի խոսքերը միտքս կու գային, և միակ երանություն մը — անսովոր երանություն, — կը պաշարեր զիս. երջանիկ էի մտածելով, որ երբեք պիտի չխոսեի ա՛լ այդ աղջկան հետ, և երբեք իմ բարեկամուհիս պիտի չըլլար ան, և թե աշխարհիս մեջ, ոչինչով, ո՛չ մեկ սովորական բանով, իմ հիշատակս պիտի մեծանար իր մեջ:

Բայց և այնպես, հաջորդ օրը, նորեն տեսա իմ ճամփու ընկերուհիս, Թիֆլիսի փողոցներեն մեկուն մեջ, թեև ան չնմարեց զիս. և ես, ժամանակ չունեցա իմ քերիս հանելու: Իրիկունը շարունակեցի ճամփորդությունս:

Այս դեպքը տեղի կ'ունենար շուրջ քսան տարի առաջ: Անկե ի վեր շատ երջանկություններ և դժբախտություններ անցան:

Կյանքիս ամենն լավ օրերը Պետրոգրադի մեջ սահեցան: Հոն շատ սերեր, նախանձ, և նույնիսկ հափշտակություն ունեցա, բայց երբեք չեղավ զգացում մը, նման անոր՝ որուն ենթարկվեցա այն ատենը, շոգեկառքի այդ վագոնի մեջ:

Պարզ դիպվածով մը իմացա, որ իմ նախկին ճամփու ընկերուհիս ալ ապրած էր Պետրոգրադի մեջ, ամուսնացած, բայց և արդեն մեռած էր:

Եվ քանի միտքս կ'իյնար թե՛ կրնայի զայն տեսնել, և չկրցա նշարել — այնքան անհավատալ կը թվեր իր մահը ինձի:

Կը խորհեի միայն:

Չէ՞ թե, վերջապես, Օրթանսիայի ծաղիկը չի կրնար փթիլ զինվորական համազգեստի նմանող երկինքի մը տակ:

Չէ՞ թե բիբերը, որոնց մեջ ցուլացին Էլպրուսի վարդորակ սարերը, չկրցան տոկալ երկար ատեն Ֆոնդանքայի ցեխտտ սառ երևույթին...

Չէ՞ թե այդ մատղաշ հոգին, — կարող արդեն իսկ հասկնալու անթափանցելի Չեխովը — չկրցավ իմանալ այս տգեղ, տեղ-տեղ նյութականացած կյանքը, բոլորովին օտարական իր ծննդավայրին:

Կը կրկնեմ թե՛ չգարմացա, և նույնիսկ չտխրեցա: Որպես թե՛ ինձի ըսած ըլլային, թե՛ ուրիշ տեղ մը գացած էր ան, տեղ մը՝ ուր չկար երկրագունդի ֆիզիկական կյանքին կապված մեղ հասկացողությունը. բայց տակավին ինձի կը մնար կարողությունը փնտրելու թե՛ ինչո՞ւ համար այդ տեղը ավելի հաճելի էր իրեն...

Ասկե դուրս, այն պահուն, որ իր ֆիզիկական մահացումը կ'իմանայի, ինձի այնպես թվեցավ, թե՛ ան զիս հիշած է, հիշած է նաև մեր վագոնի հանդիպումը:

Եվ այսօր, ինքն է, ինքն է, որ հատկապես այս սրճարանը դրկած է, իրեն այնքան նմանող այս անձը, հիշեցնելու համար ինձի երիտասարդությանս մեջ անցած այդ օրը:

Երբ մտածումներես սթափեցա, և ակնարկ մը մետեցի պատուհանին կողմը, ուր երկու կիններ քիչ մը առաջ նստեր էին սեղանի մը շուրջ, ոչ ոք տեսա հոն:

Չեմ գիտեր ինչո՞ւ հարցուցի արկղակալուհիին սրճարանին տիրոջ անունը և իբր պատասխան իմացա թե այդ հաստատությունը կը կոչվեր «Սիրանույշ»:

Այս զուգահեռությունն ալ զիս չգրգռեց. նույնիսկ զուգահեռությունն չթվեցավ ինձի, այլ ուրիշ բան մը, որո՛ւն չեմ գիտեր ի՞նչ անուն տալ...

Փողոցը, տաքը միշտ ավելի հեղձուցիչ էր. տասնյակ մը քայլ առնելիս վերջը, վերստին եկա մաքրագործվիլ և կը մտածեի. «Ահա, թերևս հիմա պիտի ընկճվիմ և մեռնիմ»: Բայց այս անգամ, բնագղներու ամենն վատը չչարչրկեց զիս, և չսպառնաց ինձի...

Մուսա լեռը գտնվում է Ալեքսանդրեաի ծոցի և Նրա մեջ թափվող Ուրոնտես գետի ստորին հոսանքի միջև, բարձրությունը 1355 մ է: Դժուշակ 1915-ի հուլիսի 30-ին եկավ նաև մուսալեռցիների գաղթի հրամանը, սակայն նրանք, Տիգրան Անդրեասյանի և մյուս աչքի ընկող գործիչների ղեկավարությամբ, ունեցած զենքով, պարենով ու անտառներով բարձրացան Մուսա լեռ: Լեռ բարձրացողների մեծ մասը կանաչը ու երեխաներ էին: Ռազմիկները ընդամենը 600 հոգի էին՝ սասմանափակ ջանակությամբ զենքով ու փամփուշտներով:

ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ



Օգոստոսի 7-ին սկսվեց թուրքական առաջին հարձակումը. 200 հոգիանոց կանոնավոր ստորաբաժանումը ինքնավստահ առաջ էր շարժվում, սակայն, հանդիպելով համառ դիմադրության՝ վեցժամյա մարտերից հետո կորուստներ տալով, նահանջեց ելման կետերը: Թշնամու զորասյան վրա առաջին զնդակն արծակեց Սարգիս Գապայանը, ով թուրքական բանակում ու ոստիկանությունում 6 տարի ծառայելուց հետո 1915-ին փախել ու միացել էր ընթուստացած հայրենակիցներին: Նա մահացավ 1949-ին Այնճարում՝ 91 տարեկան հասակում: Առաջին իսկ զնդակից թուրք սպան ընկավ, զորասյունը պատասխանեց տեղատարափ կրակով: Այսպես սկսվեց Մուսա լեռան քառասունօրյա հերոսամարտը: Հենց առաջին կռիվ ժամանակ Սարգիս Գապայանի առաջարկով տղամարդիկ իրենց կարմիր գոտիները պատրաստած դրոշակ պարզեցին, որն ընթուստության ու ապստամբության նշան էր: Դրան թուրքերը պատասխանեցին հայիոյանքներով ու ավելի սաստիկ կրակով: Չորսժամյա ծանր մարտից հետո սկզբնական ինքնավստահությունը լրիվ կորցրած և խայտառակ պարտություն կրած ստորաբաժանումն անկանոն նահանջեց ու կենտրոնացավ Գապագլը բնակավայրում՝ անցավ ինքնապաշտպանության: Հայերը ոչ մի կորուստ չունեցան: Դրանից հետո զենք բռնելու ունակ տղամարդիկ արագորեն բաժանվեցին տասնյակների և դիրքավորվեցին լեռան տարբեր հատվածներում:

Թշնամին, իր ուժերը համալրելով, երկրորդ անգամ հարձակվեց օգոստոսի 10-ին: Հաջի Հաբիբլի մոտ տեղակայված թուրքական թնդանոթները առաջին ռումբերն արձակեցին Պազաճըզի դիրքերի ուղղությամբ: Հրետանային մախապատրաստությունից հետո 5000-անոց զորասյունը 7 թուրք հրամանատարների և գերմանական բարձրաստիճան սպայի առաջնորդությամբ անցան վճռական հարձակման, որին ողջ ընթացքում իր չդադարող կրակով աջակցում էր լեռնային հրետանին: Դրությամբ բավականին ծանր էր, բայց հայ կտրիճներն անվեհեր մարտեր էին մղում՝ այն էլ հորդ անձրևի տակ: Այդ օրվա ճակատամարտը տևեց 12 ժամ, բայց հայերը չէին նահանջում և ոչ մի քայլ: Նրանք թշնամուն հետ մղեցին՝ պատճառելով ծանր կորուստներ: Տասներկուժամյա այս ծանր ու արյունալի կռիվն ավարտվեց թուրքերի լիակատար պարտությամբ: Հայերն ունեցան 4, իսկ հարձակվողները՝ 100 սպանված: Հայ քաջամարտիկներից Հակոբ Գարագյոզյանը, որին ժողովուրդը «Սվեդիայի առյուծ» պատվանունն էր տվել, մահացու վիրավոր, ընկերներիս ասել էր. «Կաղաչեմ, ինձով մի զբաղիք: Ես արդեն ինչ որ պիտի ըլլամ, եղած եմ. դուք զացեք և թշնամիին դիմադրեցեք: Մանավանդ մի տարակուսիք վերջնական հաղթանակի վրա: Մերը պիտի ըլլա ան» («Հուշամատյան Մուսա լեռան», Բեյրութ, 1970, էջ 334): Ողջ գիշեր անձրևում էր՝ մինչև ոսկորները թրջելով հյուղակներում ապստամած սառնող ժողովրդին: Համատարած կաթոցի, քամու ու կրակի աղուտ լույսի ներքո մահկանացուն էր կնքում Մուսա լեռան առյուծասիրտ հայորդին՝ Հակոբ Գարագյոզյանը՝ հերոսամարտի անդրանիկ վիրավորը, ով երկար տարիներ շրջակա թրքության ահ ու սարսափն էր: Մարտում աչքի ընկավ նաև Սարգիս Գապայանը: Դրանից հետո զուսմարված խորհրդակցությունում ստեղծվեց հատուկ կենտրոնական վարչություն՝ նախագահությամբ պատվելի Տիգրան Անդրեասյանի, և զինվորական մարմին, որի պատասխանատու նշանակվեց տեր Աբրահամ Տեր-Գալուստյանի երիտասարդ որդին՝ Մովսես Տեր-Գալուստյանը: Ստեղծվեցին նաև 12 հոգիանոց 43 մարտախմբեր: Քանի որ ընթուստ գյուղացիների մարտախմբերը չէին կարող հուսալիորեն պաշտպանել ընդարձակ լեռնային տարածքը, Սվեդիայի լավագույն կռվողներից ստեղծվեցին 3 հարվածային խմբեր, որոնց խմբապետներն էին Եսայի Յաղուբյանը, Պետրոս Տնաբյանը և Պետրոս Տուտագյանը, ովքեր մեծ պատասխանավորե-

յամբ կատարեցին իրենց գործը և դարձան հերոսամարտի հերոսներից:

Բավական լավ էին կազմակերպված նաև թիկունքային աշխատանքները: Հստակ աշխատում էին «Թելեֆոնի տղաքը», կապավորների ստորաբաժանումների խմբերը, որոնց անդամները, գտնվելով միմյանցից 10 րոպե հեռավորության վրա, շատ անգամ զնդակների տարափի ներքո պահպանում էին կապը դիրքերի ու կենտրոնի միջև: Կանանց մի մասը զենքով ամուսինների կողքին էր, մյուսները գթության քրոջ պարտականություններ

էին կատարում, իսկ երրորդները՝ ջուր, սնունդ ու զինամթերք հասցնում կռվողներին: Ծերունիներից ու զենք չունեցող տղամարդկանցից էլ կազմվեցին ամրաշինական երեք վաշտեր: Ջենք-զինամթերքի ընդհանուր մատակարարը Ներսես Գազանճյանն էր, ով ընտիր զինագործներ Միքայել Գազանճյանի և Հովհաննես Եղիայանի հետ ղեկավարում էր զենքերի նորոգումը, վառողի պատրաստումը և փամփուշտներ լցնելը:

Օգոստոսի 15-ի արշալույսին հրետանային աննախադեպ հզոր աջակցության պայմաններում թշնամու կանոնավոր վաշտերն ու բազմաքանակ խուժանը 6 ուղղություններով սարսափելի հարձակում սկսեցին. Մուսա լեռը պաշարված էր դեպի վեր գործող 5000 կանոնավոր զորքերով ու 4000 ավարառու հրոսակներով, որոնց ընդհանուր հրամանատարը Ֆախրի փաշան էր: Առաջին ծանր կռիվները մղվեցին Թաթար Ալանկի մոտ, որի պաշտպանությունը բավական թույլ էր: Մյուս ճակատների պաշտպանները դիմանում էին: Այս ուղղությունում սկսված մերձամարտից և ապա ձեռնամարտից հետո թշնամին կարողացավ ճեղքել ընթուստ գյուղացիների պաշտպանությունը, ինչի հետևանքով 3 դիրքեր աստիճանաբար անցան թուրքերին: Չանագլը գյուղի կողմից հարձակվող հզոր զորասյունը սպառնում էր գրավել Սավուլագի աղբյուրները՝ ապստամբներին ջրից զրկելու համար, բայց ջարդվելով ետ քաշվեց: Թշնամին լեռնային թնդանոթները հասցրեց Թաթար Ալանկի մերձակայք ու սկսեց ավերիչ կրակ բացել: Մարտիկներն այստեղից օգնություն էին խնդրում, բայց պահեստային ուժեր այլևս չկային: Կռվում էին անգամ կանայք, աղջիկներն ու անչափահաս տղաները: Կռվում էին որսորդական պարզ զենքերով, մահակներով, քարերով. ով ինչ ուներ, ով ինչ գտել էր: Մի վաթսուամյա մարդ, բռնելով թուրք զինվորի կոկորդից, խլեց հրացանն ու սկսեց կրակել: Մի ծերունի էլ, միայն Աստծուն ու իրեն է հայտնի, թե ինչպես, կարողացավ պայթեցնել դեռ 1890-ականներից մնացած սարսափելի ժանգոտ ու վաղուց արդեն անգործածելի համարվող ձեռնառումը՝ խախտելով ու խուճապահար անելով մեկ այլ ուղղությամբ առաջացող զորասյան շարքերը: Վիրավորները կամովին առանձնանում էին կռվողներից, մեռնողներն արգելում էին իրենց օգնություն ցույց



տալ ու պահանջում շարունակել մարտը, որպեսզի այն սվեդիահայության վերջին կռիվը չդառնար: Մյուս ճակատներում ետ շարտված թուրքական ուժերը միացան հարձակման գլխավոր ուղղությամբ, ինչը հայերին ևս թույլ տվեց կենտրոնացնել հիմնական ուժերը: Այլևս 1 ճակատ էր, և ճակատամարտի առաջին ու սարսափելի ծանր օրը, երբ հայերը հանձնեցին Թաթար Ալանկի մի շարք կարևոր դիրքեր, ունեցան 12 զոհ և 10 վիրավոր: Հաջորդ օրը՝ կեսօրից հետո, նոր համալրում ստացած թուրքերը դիմեցին կատաղի հարձակման: Այս ծանր ու ճակատագրական պահին էլ անհավատալիորեն մոտ տարածությունից արձակված հզոր համազարկերը սարսափելի խուճապ առաջացրին Տանլաճըզի բանակատեղիում: Քաբուսիե գյուղի 2 դավաճան հայ եղբայրներ մի ողջ զուսմարտակ գաղտնի կաժաններով առաջնորդել էին այստեղ: Թուրքերն ընդամենը կես կիլոմետր էին հեռու ժողովրդից ու գլխավոր զորանոցից, որոնք, հայտնվելով նշանառու կրակի գոտում, անընդհատ զնդակոծվում էին: Օրիսասական իրավիճակ էր, սարսափահար ժողովուրդը, թուրքերի ձեռքը չընկնելու համար, տարերայնորեն մի հսկա թափոր կազմած, տեր Աբրահամ քահանա Գալստյանի առաջնորդությամբ ուղղվեց դեպի ծով՝ այնտեղ խեղդվելու համար: Բայց շուտով կանգնեցվեց մի խումբ մարտիկների կողմից: Թուրքերի վճռորոշ այս հարձակումը կանգնեցվեց դիրքերն այդպես էլ չթողած Վանես Գոճանյանի (Ֆենտ), Հակոբ Խեչոյանի, Սարգիս Շաննադյանի, Եսայի Յաղուբյանի և այլոց անմահանց կռիվ շնորհիվ: Յաղուբյանը ձեռնամարտի ընթացքում թուրք սպա սպանեց, իսկ Մամուկ Գըլճյանը մահվան

սպառնալիքով դիրքեր վերադարձրեց անձնատվության գնացող մի խումբ դասալիքների: Շուտով Տանլաճըզ բնակատեղիի ուղղությամբ ճակատը կայունացավ: Ծովափից վերադարձող ժողովուրդը, փայտով, քարով ու դանակով զինված, սառնասրտորեն սպասում էր թշնամուն: Իսկ 2 մատնիչ եղբայրները բռնվեցին ու հրապարակային մահապատժի ենթարկվեցին: Այս ճակատամարտն արտացոլեց հերոսամարտի ժողովրդային բնույթը, երբ մահուկ ու ծեր դարածել էին հավաքական աշխարհագր: Հետագայում այն կոչվեց «Մուսա լեռան



Սարդարապատ»:

Իսկ թուրքերը դիրքավորվեցին իրենց եղած վայրերում՝ սպասելով լուսանալուն: Հայերը գիշերն անցան թշնամու թիկունքը և այնտեղից ու ճակատից հարվածեցին նրան: Հաջորդ օրվա կեսօրին Մուսա լեռն այլևս մաքրված էր թուրքերից: Մերոնց ձեռքն անցավ մեծ քանակությամբ ռազմավար: Երկօրյա ճակատամարտում հերոս ժողովուրդն ունեցավ 14 զոհ և վիրավոր, թուրքերը՝ 700-800, ըստ մեկ այլ աղբյուրի՝ ավելի քան 1000: Թաթար Ալանկի խոշոր հաղթանակ խանդավառեց մուսալեռցիներին՝ նրանց կյանքը վերադարձնելով բնականոն հուն: Այս ջարդից հետո թուրքերն առժամանակ դադարեցրին հարձակումները: Նման ռազմադաշտային պայմաններում կանոնավոր կատարվում էին եկեղեցական բոլոր արարողությունները, կանայք հյուղակների առջև երկայնաբարներով ցորեն էին աղուն, ծովի ջուրը եռացնելով՝ աղ պատրաստում, զինագործները՝ նորոգում զենքերը, փամփուշտ ձուլում:

Թուրքերը որոշեցին պաշարել լեռն ու սավանահ անել հպարտ ու անկոտրում ժողովրդին: Ինքնապաշտպանության ղեկավարները հույս ունեին, որ ծովից կերևա դաշնակիցների որևէ մարտանավ և իրենց օգնության կհասնի: Ազդանշան տալու համար լեռան ծովահայաց եզրին բարձրացվեց 2 «դրոշակ»: Դրանք լայնատարած սավաճներ էին, որոնց վրա նկարված էին կարմիր խաչ և զրկված՝ «Քրիստոնյաները վտանգի մեջ են օգնեցեք»: Սեպտեմբերի 13-15/16-ը հերոս սվեդիացիները (4158 մարդ) փոխադրվեցին ֆրանսիական «Գիշեն», «Տեսթեր», «Ամիրալ Շարնե», «Տեզեքս» և «Ֆուրե» ռազմանավերը և շարժվեցին դեպի Պորտ Սաիդ (Եգիպտոս), որտեղ ստեղծված վրան-քաղաքներում էլ հաստատվեցին՝ ստանալով Եգիպտոսում բնակվող իրենց հայրենակիցների օգնությունը: Վերապրածներից շատերը, որ տակավին երեխա էին, տասնամյակներ անց Վերժինե Սվազյանին պատմել են, թե ինչպես անապատի հրաշեկ ավազների վրա գրելով են սովորել մեսրոպյան տառերը, մինչև մի քանի կրանների տակ սկսել է գործել Հայկական բարեգործական ընդհանուր միության Սիսվան վարժարանը: Լեռնորդիների այդ փրկարար գործողության կազմակերպմանը մեծապես օգնել են ֆրանսիական նավատորմի ծովակալ Լուի Դարտիժ դը Ֆուրնեն և նավատորմում ծառայող սպա Տիրան Թեբեյանը:

Մուսա լեռան հերոսամարտը հայ ժողովրդի անընկճելի ոգու լեռնացուն է, նրա ապրելու ու արարելու կամքի և իր օրրանի համար մինչև արյան վերջին կաթիլը պայքարելու պատրաստականության փայլուն օրինակներից մեկը: Նաև այս պարզ ծշմարտության ապացույցը, որ երբ հայ ժողովուրդը, համոզես է գալիս միասնական ու համախումբ, հրաշքներ է գործում:

Սվեդիահայերի հերոսամարտը իր գեղարվեստական արտացոլումն է գտել Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպում (գերմաներեն). թարգմանվել նաև այլ լեզուներով:

Շ. Գ. Փրկված մուսալեռցի քաջ երիտասարդները մուսալեռնայան լեզենի մեջ և դաշնակիցների զորքերի կազմում 1918-ի սեպտեմբերին Արարայի ճակատամարտում մի նոր հարված հասցրին թուրքական բանակին: Սվեդիահայերը, պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո, վերդարձան իրենց գյուղերը և մուսալեռցիներին նվիրված հուշարձան կանգնեցրին (1932), բայց դա կարճատև տևեց: 1939-ին Ալեքսանդրեաի սահմանը տրվեց Թուրքիային, և Սվեդիայի հայ գյուղերը ընդմիշտ զրկվեցին իրենց բնակիչներից: Խուսափելով թուրքական հալածանքներից՝ նրանք գնացին Սիրիա և Լիբանան: Այստեղ՝ Լիբանանում, հիմնեցին Մուսալեռ-Այնճար հայավանը, իսկ երկրորդ համաշխառային պատերազմից հետո մուսալեռցիների երկու երրորդը գաղթեց Նորիդիային Հայաստան: Նրանց ավանը (Էջմիածնի շրջանում) կոչվում է Մուսալեռ, որտեղ Մուսա լեռան հերոսամարտին նվիրված հուշարձան է կանգնեցվել:

Հրաչյա ԲԱՆՈՅԱՆ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Հազվագյուտ հողատարրերը՝ «արդյունաբերության վիտամինները»՝ ՀՀ հանքավայրերում

Նախ՝ տեսնենք, թե՛ ինչ են իրենցից ներկայացնում հողատարրերն ու ինչ կարևորություն ունեն դրանք ժամանակակից արդյունաբերության մեջ:

Քիմիական գիտությունը հողատարրերի շարքին են դասում Դ. Մենդելեևի պարբերական աղյուսակի երրորդ խմբի երկրորդ ենթախմբի 3՝ սկանդիում, իտտրիում և լանտան և թիվ 57 հերթական հա-

րի որակը:

Սկանդիումի կիրառությունը մինչև 2000 թվականը շատ սահմանափակ էր: Սկանդիումի միացություններն ու օքսիդները կիրառվում էին էլեկտրոնիկայում, մասնավորապես ֆերրիտները, որոնք պարունակում են ոչ մեծ քանակի սկանդիումի օքսիդ, կիրառվում են արագ գործող հաշվողավճռողական սարքերում: Մետաղական սկանդիումը կիրառվում է էլեկտրավակուումային տեխնիկայում որպես լավ գետտեր (գազերի չփոշիացնող կլանիչ): Իտտրիումի օքսիդը նույնպես

մի օքսիդը ապակում տալիս է վառ կարմիր գույն, իսկ պրոմեթիումի օքսիդը՝ կանաչ: Լանտանոիդների օքսիդները կիրառվում են մակ ճենապակու, ջնարակի և արծնապակու գունավորման համար:

Ամերիկյան «Վեստինգհուս» ֆիրման ցիրկոնիումի և իտտրիումի օքսիդների հիման վրա մշակել է բարձրջերմաստիճանային վառելիքային սարք, որը 35-60 տոկոսով մեծացնում է ջերմային էլեկտրակայանների օգտակար գործողության գործակիցը:

Ծապոնիայում և ԱՄՆ-ում ստեղծվել են

նույնպես մեջ և այդ ուղղությունը դարձել է հեռանկարային բոլոր երկրների ավտոմոբիլաշինության գործում:

Գիտնականները գտնում են, որ հազվագյուտ մետաղների, այդ թվում առաջին հերթին հազվագյուտ հողատարրային մետաղների, նկատմամբ պահանջարկը երկարատև հեռանկարում ոչ միայն չի նվազի, ոչ միայն չի մնա կայուն, այլ դանդաղ և կայուն թափով կարող է աճել:

Հազվագյուտ հողատարրեր են հայտնաբերված ՀՀ երկաթաքարային հանքավայրերի մեծ մասի տարածքում, այն հանքավայրերի, որոնց տարածքը որոշակի աստիճանի հետախուզված և հետազոտված է: Դրանցից են Աբովյանի մանրազնին հետախուզված (հաշվեկշռային պաշարներով) հանքավայրը, Սվարանցի և Բազումի նախնական փուլով հետախուզված հանքավայրերը, որոնց տարածքում առկա են հեղինակային հաշվարկված պաշարներ: Նշված հանքավայրերից բացի, Հայաստանի տարածքում հայտնաբերված են հարյուրից ավելի, փոքր ու մեծ, հանքաբերականներ, որոնք դեռևս չեն հետախուզվել և երկաթի հետ տարածված հարակից բաղադրիչների գծով չեն հետազոտվել: Վերջիններիս թվին են պատկանում Թբուշուր-Մարտունու և Կամաքարի հանքաբերականները, որոնք երկաթի պարունակությամբ և քանակային առումով առավել հեռանկարային են: Վերջերս Գորիսում իր ծեռության «հաճույքը» վայելող, Մեղրու շրջանի անխոնջ հետազոտող իմ երկրաբան ընկեր Գ. Խոջաբաղյանն ինձ էր ուղարկել մեկ էջի վրա Կամաքարի երկաթի հանքավայրի զաբրոիդներից վերցված մուշների անալիզների տվյալները, որոնք մեծ հեռանկար են կանխատեսում հողատարրային մետաղների և 16 այլ տարրերի գծով: Շիշտ է, ինձ համեմատե՛ք էջից չի երևում, թե քանի մուշի անալիզների տվյալներ են բերված, որտեղից են (է) վերցված այդ մուշները (մուշը), որքան է երկաթի պարունակությունը և այլն: Սակայն այդ տվյալները, որոնք մենք հետազայում կբերենք սույն հոդվածի վերջնամասում, մեծ հեռանկարներ են խոստանում ՀՀ-ում հողատարրային մետաղների պաշարների հայտնաբերման գծով:

Յրաչյա ԱՎԱԳՅԱՆ
Երկրաբանահանքաբանական
գիտությունների դոկտոր

«Գերմանացիները մեր մասին»

Երկար ժամանակ է, «Գիտություն» թերթը պարբերաբար և հետևողականորեն հրապարակում է երկրաբանաբանական գիտությունների դոկտոր Հրաչյա Ավագյանի հոդվածները, ուր խոսվում է մեր ընդերքի անխնայ և անխիղճ թալանի, հանքերի օտարերկրյա տերերի կողմից շրջակա միջավայրը պոչամբարներով լցնելու և բնությունը խաթարելու մասին: Մեր հեղինակը թվերով և փաստերով անընդհատ ահազանգում է այն մասին, որ պոչամբարների թափոնները թունավորում են հողը, ջուրը, կենդանիներին և, դժբախտաբար, նաև մարդկանց: Սակայն մեր ահազանգերը, տագնապի կոչերը մատնվել են անտարբերության, իսկ մեր ընդերքի հարստությունները գիշատչաբար շահագործողները՝ անմասնակից և անհաղորդ, շարունակում են իրենց սև գործը՝ ապականում, ոչնչացնում են հայրենի բնությունը, թունավորում բուսականությունը, ջուրը, կենդանական աշխարհը և հայ մարդուն: Այս նախաբանի պատճառը և շարժառիթը եղավ մամուլում հրապարակված «Գերմանացիները մեր մասին» արձագանքը, որը ներկայացնում էնք ընթերցողի ուշադրությանը:

Գերմանական «Բեռլիներ ցայտունգ» հեղինակավոր պարբերականը անդրադարձել է Քաջարանի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործմանը և դրանից բխող խնդիրներին: Սա ավելի հետաքրքիր է դառնում այն ֆոնին, որ հանքավայրը շահագործում է հենց գերմանական ընկերությունը՝ «Քրոնիմետը»:


Յոդվածի հեղինակները այցելել են Հայաստան, եղել Քաջարանում: Լրագրողները գրուցել են մակ ՀՀ մայիսին վարչապետ Յրանտ Բագրատյանի հետ, որը ասել է, որ երբեք չէր վաճառի Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն ու Քաջարանի հանքավայրը. այն, Յրանտ Բագրատյանի խոսքով, երկրի համար արժաթե թաս է:

«Այն ամենը, ինչ մենք լսեցինք և տեսանք Հայաստանում, մեզ դեպրեսիայի մեջ գցեց: Գերմանական հանքարդյունաբերական մի ընկերությունը կողոպտում է մի աղբատ երկիր և վնասում դրա բնակչությանն ու շրջա-

կա միջավայրը: Քաջարանում մարդիկ վախենում էին խոսել», - գրել են հոդվածի հեղինակները:

Նրանք բավականին մանրամասն են նկարագրել «Քրոնիմետի» ղեկավար կազմի հետ իրենց հանդիպումը: Ավագ մենեջեր Միքե Պոլսկովի մասին գրել են, որ այդ գիրուկ մարդու դաստակին փայլում էր թանկարժեք թվացող ժամացույցը, ինչը ապացույց էր անբարեխղճության մասին խոսակցությունների շրջանակում:

Գերմանացի լրագրողները մակ իրենց հետ Բեռլին են տարել Քաջարանի հանքից բնություն տարածվող ցեխաջրից, որից խմում են գյուղի անասունները: Բեռլինյան լաբորատորիայում իրականացրած հետազոտությունը պարզել է, որ այդ ջրի բաղադրությունը ոչ միայն չի համապատասխանում գերմանական խմելու ջրի չափանիշներին, այլև՝ թունավոր է:





Դանիել
ՎԱՐՈՒԺԱՆ

ԱՆԴԱՍՏԱՆ

Արևելյան կողմն աշխարհի
հաղաղությունն թող ըլլա...
Ո՛չ արյուններ, քրորսինք հոսին
Լայն երակին մեջ ակոսին.
Ու երբ հընչե կոչնակն ամեն գյուղակի՝
Օրհներգությունն թող ըլլա:

Արևմտյան կողմն աշխարհի
Բերրիությունն թող ըլլա...
Ամեն աստղն ցող կայլակի,
Ու ամեն հասկ ձուլն ոսկի.
Եվ ոչխարներն երբ սարին վրա արածին՝
Ծիլ ու ծաղիկ թող ըլլա:

Հյուսիսային կողմն աշխարհի,
Առատությունն թող ըլլա...
Ոսկի ծովուն մեջ ցորյանին
Հավետ լողա թող գերանդին.
Ու լայն ամբարն աղուններուն երբ բացվի՝
Բերկըրությունն թող ըլլա:

Հարավային կողմն աշխարհի
Պըտղաբերուն թող ըլլա...
Ծաղկի՝ մեղրը փեթակներուն,
Հորդի գինին բաժակներուն.
Ու երբ թխեն հարսերը հացը բարի՝
Սիրերգությունն թող ըլլա:

Մարտում ջուրը հայտնաբերվել է Գառնի խառնարանում

Եվ այն անվանակոչված է ի պատիվ հայկական Գառնիի

Նախօրեին պաշտոնապես հաստատվել էր, որ Մարս մոլորակում հեղուկ վիճակում ջուր է հայտնաբերվել:


«Reuters»-ը հստակեցնում է, որ Մարսի ջուրը ֆիքսված է Գառնի կոչվող խառնարանում, որն իր հերթին այս տարվա ապրիլին անվանակոչվել է ի պատիվ Հայաստանի Գառնի բնակավայրի, ինչպես մանրամասնում է «LiveScience.com»-ը:

Այժմ հստակեցվում է նաև, որ աղահամ ջուրը՝ Գառնու խառնարանի լանջերից դուրս է հորդում ամռան ամսերին: Ի դեպ, երևույթը առաջին անգամ ֆիքսվել էր դեռևս 2011-ին:

Վերջերս Մարսի մակերևույթին հայտնաբերված աղի գետակներն սկզբունքորեն կարելի է օգտագործել որպես ջրի աղբյուր կարմիր մոլորակի վրա ապագա գաղութների համար, այդ թվում՝ «պատերազմի աստծու» հասարակածում հատուկ սարքավորված ջերմոցներում տունկերի ոռոգման համար: Այդ մասին, ինչպես տեղեկացնում է «Արմենպրեսը», հայտարարել է NASA-ի գիտական ստորաբաժանման ղեկավար, մախկին աստղագետ Վոն Գրանսֆիլդը:

NASA-ի կենտրոնակայանում ելույթ ունենալով մամուլի ասուլիսի ժամանակ, որը նվիրված էր Մարսի հասարակածի միանգամից մի քանի խառնարանների լանջերին «աղի գետակների» հայտնաբերման հաստատմանը, Գրանսֆիլդը նշել է, որ ջրի տվյալ պաշարներն ակներևաբար մեծացնում են գաղութականների համար Մարսի արժեքն ու ապագա «բնակելիությունը», որոնք ստիպված չեն լինի իրենց հետ թթվածին և ջուր տանել:

Գրանսֆիլդի խոսքով՝ նման ծրագրերի իրագործումը մոր հնարավորությունների մի ամբողջ շերտ է բացում գաղութականների համար, նման ջերմոցները կծառայեն ոչ միայն որպես սննդի, այլև թթվածնի և շատ այլ բաների աղբյուրներ, որոնք կենսականորեն անհրաժեշտ են Մարսի ապագա բնակիչների ֆիզիկական և հոգեբանական առողջության համար, հաղորդել է «ՌԻԱ մոլոստին»:



Եվ թագավորը հրաՄայեց

Ինչո՞ւ է ծովայինների հագուստը կապույտ:
Համեմայն դեպս, ծովի գույնը այստեղ ոչ մի նշանակություն չունի:

Իրական պատճառը կապված է անգլիական Գեորգ Երկրորդ թագավորի ամենօրյա առավոտյան զբոսանքներից մեկի հետ: Մի անգամ նա մտնում է Հայդպարկ, որն այն ժամանակ ազատամիտ հռետորների սիրած վայրը չէր, այլ ասպարեզ, ուր ձիերով զբոսնում էին անգլիացի ազնվականները: Մեր նկարագրած օրը հրաշալի ճերմակ մետուքի վրա, կապույտ ամազոնկա հագած, սպիտակ վզնոցով այստեղ ճեմում էր հերցոգուհի Բրեդֆորդը:

Թագավորի սուր աչքը նկատեց ինչպես դեռատի լեզվի գեղեցկությունը, այնպես էլ նրա հագուստի գույների նրբագեղ դաշնությունը: Նորին մեծությունը թուրքական ուներ ոչ միայն գեղեցիկ սեռի, այլ նաև բրիտանական ռազմական նավատորմի նկատմամբ:

Վերադառնալով պալատ, նա անմիջապես կանչեց ծովակալության ղեկավար լորդին և հրամայեց անհապաղ մոր համազգեստ սահմանել ծովայինների համար: Իհարկե, մույն կապույտի և ճերմակի համադրությամբ, ինչպիսին էր լեդի Բրեդֆորդի հանդերձը:

Թագավորի ասածն օրենք է հպատակների համար: Այսինքն, բրիտանական ծովայիններն անմիջապես արժանին մատուցեցին միապետի ընտիր ճաշակին: Համազգեստը զուսպ էր, առանց պաճուճանքի, սակայն գեղեցիկ:

Պետք է ավելացնենք նաև, որ մինչև Գեորգ Երկրորդի կարգադրությունը, ծովայինների համազգեստում իսկական խառնաշփոթ էր: Օրինակ, սպաները կարող էին հագնել ինչպես սպիտակ, այնպես էլ կարմիր անդրավարտիքներ, ինչպես կանաչ, այնպես էլ գորշ մունդիրներ: Նավաստիներին հագցնում էին հետևակայինների բաժնիկներ, իսկ շալվարները՝ ով ինչ գույնի ուզեր:

Անգլիական ծովայինների համազգեստի կապույտ գույնը արագ տարածվեց նաև ուրիշ երկրների ռազմածովային նավատորմերում: Իսկ 19-րդ դարում այն մուտք գործեց նաև առևտրական նավատորմ:



Դրախտ: Աղանը հարցնում է Աստծուն.

- Տեր իմ, Դու ես ստեղծել Եվային և լավ ես արել: Սակայն ինչո՞ւ ես Դու նրան տվել այդպիսի գեղեցիկ աչքեր, հրաշալի մազեր և նման հմայիչ ու գերող մարմին:
- Այդ բոլորը նրա համար, որ դու նրան սիրես:
- Աստված իմ, բայց ինչո՞ւ Դու նրան մեկ կաթիլ իսկ խեղճ չես տվել:
- Դա էլ, սիրելի Աղան, որ նա էլ քեզ սիրի:



- Ալլո, ես Օդեսա եմ զանգե՞լ:
- Իսկ ի՞նչ եք կարծում, բա էլ ո՞ր:
- Հա, ուրեմն չեմ սխալվել: Պարոն Սողոմոն, այդ դո՞ւք եք:
- Իհարկե, իսկ ի՞նչ է պատահել:
- Տխուր լուր պիտի հաղորդեմ: Նյու Յորքում վախճանվել է ձեր քեռին:
- Եվ ի՞նչ, ունեցած-չունեցածը ինձ է կտակել:
- Չէ, չէ, ի՞նչ եք ասում, նա պարտքերի մեջ թաղված է:
- Լսեցե՛ք, պարոն, Դուք ո՞ր եք զանգահարել:



Հանդիպում են երկու կատու. մեկը՝ պարարտ, առողջ, փարթամ ու փայլուն մազերով: Մյուսը՝ նիհար, հյուծված, կեղտոտ, կողերի ոսկորները ցցված:
Հաստիկ.
- Լսիր, երբ ես քեզ նայում եմ, ինձ թվում է, թե դու տվի երկրում ես ապրում:
Նիհար.
- Իսկ երբ քեզ եմ նայում, անմիջապես պարզ է դառնում, թե ով է ամեն ինչ լափողը:



Բժիշկը՝ հիվանդին:
- Եթե դու չթողնես խմելը, ապա շատ շուտով կգրկվես լյարդից:
- Դուք, բժիկներդ, միշտ էլ ասում եք: Ողորմելի շաղակ-րատներ եք բոլորդ և հայտնի փչաներ:
- Մի քանի ամիս առաջ հոգեբանն ինձ ասաց, որ եթե չթողնեմ խմելը, ապա ստիպված կլինեմ հրաժեշտ տալ կնոջս: Բա ո՞ր է արդյունքը, քեզ եմ հարցնում:



Դատավորը.

- Ձեր աշխատավարձը ամիսը 50 հազար է, իսկ տուն եք կառուցել 10 միլիոն դոլար արժողությամբ:
- Թույլ տվե՛ք մտածել:
- Յոթ տարին բավակա՞ն է:



Դուռը բացվում և ներս է խուժում մի երիտասարդ.

- Բարև, հայրիկ:

Ծրագրավորող հայրը, որ նստած է համակարգչի առջև, առանց հայացքը թեքելու, հարցնում է.

- Ռոտե՞ղ էիր թրև գալիս:
- Բանակում, հայրիկ, բանակում:



- Ինչպես է հոգեվերլուծաբանը որոշում, որ իր այցելուն իսկապես հիվանդ է:
- Շատ պարզ: Միայն լիակատար հոգեակն հիվանդը կարող է 100 դոլար վճարել մեկ ժամվա համար:



Օդեսա, կայարան: Կառամատույցի երկայնքով քայլում է մի մարդ և անընդհատ բարձրաձայն կրկնում.

- Էրոտիկա, հորոսկոպ, անեկդոտներ: Էրոտիկա, անեկդոտներ...

Մի անցորդ մոտենում է նրան, մեկնում թղթադրամը.

- Անեկդոտներ, խնդրում եմ:

Մարդը շոշափում, զննում է թղթադրամը: Թաքցնում ծոցի գրպանում և թեքվում անցորդի ականջին.

- Ուրեմն, լսիր: Ամուսինը ժամանակից շուտ վերադառնում է գործուղումից և...

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան
24բ, հեռ. 56-80-14:

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 22.10.2015 թ.:
Տպաքանակը՝ 500: noravyan@mail.ru

"ТІТІТІОН" ("Найка") газета НАН РА